ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 1-Ն *20 հունվար 2012թ.*

ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ, 34-րդ հոդվածի 1-ին կետերով, 54 –րդ հոդվածով ինչպես նաև համայնքի ավագանու կանոնակարգով.

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել 2012թ. համայնքային բյուջեում կատարված հետևյալ փոփոխությունները

1. Համայնքի 2011թ.Բյուջեի տարեվերջի մնացորդը կազմում է 9605,2 հազ. դրամ,նույն թվում
1) համայնքային բյուջեի վարչական մասի տարեսկզբի ազատ մնացորդը 9604,8 հազ,դրամ
2) համայնքային բյուջեի ֆոնդային մասի մնացորդը 0.4հազ.դրամ
Վերոհիշյալ մնացորդը՝ 9605,2 հազ. դրամը ավելացնել ֆոնդային մասի եկամուտներին՝ համայնքային բյուջեի 0451.51."Ճանապարհային տրանսպորտ" ծրագրի 5113 "Շենք և շինությունների կապիտալ վերանորոգում" հոդվածին՝ սահմանելով վերջինիս ծախսային պլանը 81560.7 հազ. դրամ,իսկ ծրագրի ծախսային պլանը 84210.7 հազ .դրամ.
2. Ավելացնել համայնքային բյուջեի ընդհանուր եկամուտների պլանը 9605.2 հազ .դրամ,
3. Քանի որ արդեն ստացվել է կառավարության կողմից Արարատի քաղաքային համայնքին տրվող դոտացիայի ճշտված թիվը՝ 257464.3 հազ. դրամ, որը դոտացիայի նախնական տված թվից պակաս է 34.4 հազ. դրամով, ուստի պակասեցնել համայնքային բյուջեի եկամուտները 34.4 հազ. դրամ, սահմանելով համայնքային բյուջեի ընդհանուր եկամուտները 398963.2 հազ. դրամ, դրանից ելնելով պակասեցնել համայնքային բյուջեի 0861.51. <<Հանգիստ, մշակույթ և կրոն >> ծրագրի 4239 <<Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ>> հոդվածը 34.4 հազ. դրամ, սահմանելով վերջինիս ծախսային պլանը 965.6 հազ. դրամ, իսկ ծրագրի ծախսային պլանը 1465.6 հազ. դրամ:
Սահմանել համայնքային բյուջեի ընդհանուր ծախսային պլանը 398963.2 հազ. դրամ:
4.Պակասեցնել 0133.51."Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ" ծրագրի 4261 "Վարչական նյութեր" հոդվածը 20.0 հազ.դրամ,ավելացնել նույն ծրագրի 4212 "Էներգետիկ ծառայություններ" հոդվածը 20.0 հազ, դրամ;
5. Համայնքային բյուջեի 0661.51 ."Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն" ծրագրի 4264 "Տրանսպորտային նյութեր" հոդվածի 1-ին ենթակետում գրված "Դիզ վառելիք"-ի փոխարեն շարադրել "Այլ նյութեր տրանսպորտային միջոցների համար" /գազ /,իսկ երրորդ ենթակետը շարադրել "Դիզ վառելիք" <<Այլ նյութեր տրանսպորտային միջոցների համար>> /գազ/ -ի փոխարեն:
6. 0451.51."Ճանապարհային տրանսպորտ" ծրագրի 5113 "Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում" հոդվածով "Աջափնյակի վերելք " ՍՊԸ-ին վճարվող նախորդ տարվա ճշտված պարտքը կազմում է 4416.3 հազ. դրամ:

7. Համայնքային բյուջեի XX –րդ ծրագրի վերնագիրը՝ <<Բակային տարածքների բարեկարգում >> շարադրել 0661.53 <<Բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգում և պահպանում>>:

8. 0661.53. "Բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգում և պահպանում" ծրագրի 4251 "Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում" հոդվածի ծախսի ճշտված պլանը սահմանել 43906.8 հազ. դրամ: Սահմանել ծրագրի ծախսային պլանը 44856.8 հազ. դրամ:

9.Դակասեցնել 0661.53 <<Բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգում և պահպանում >> ծրագրի

1/ 4251. <<Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահապանում>> հոդվածը 24180.0 հազ. դրամ, սահմանելով հոդվածի ծախսային պլանը 19726.8 հազ. դրամ

2/ նույն ծրագրի 5134 <<Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում>> հոդվածը 240.0 հազ. դրամ սահմանելով վերջինիս ծախսային պլանը 710.0 հազ. դրամ: Սահմանել ծրագրի ծախսային պլանը 20436.8 հազ. դրամ

10. Ավելացնել

1/ 823.52.<<Մշակութային տների հիմնանորոգում և պահպանում >> ծրագրի 4251 <<Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում>> հոդվածը 20120.0 հազ. դրամ: Սահմանելով ծրագրի ծախսային պլանը 20720.0 հազ. դրամ:

2/ 0443.51. <<Շինարարություն>> ծրագրի 4251 <<Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում >> հոդվածը 4060.0 հազ. դրամ: Նույն ծրագրի 5134 <<Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում >> հոդվածը 240.0 հազ. դրամ: Սահմանել ծրագրի ծախսային պլանը 4300.0 հազ. դրամ:

11.Համայնքի ավագանու 2011թ. դեկտեմբերի 9-ի թիվ 13/5 որոշումով հաստատված համայնքի 2012թ, բյուջեում կատարել վերը նշված փոփոխությունները և ամբողջական բյուջեն ներկայացնել Արարատի գանձապետական բաժանմունք:

12. Քաղաքապետին՝ կազմել նոր նախահաշիվներ և ժամանակացույց:

Ավագանու անդամներ՝

1.	Արթուր	Ալեքսանյան		
2.	Արազի	Գևորգյան		
3.	Հենրիկ	Գևորգյան		
4.	Յուրիկ	Գևորգյան		
5.	Կարեն	Իսկանդարյան		
6.	Վարդան	Կարապետյան		
7.	Մուշեղ	Հակոբյան		
8.	Տիգրան	Հարությունյան		
9.	Խաչիկ	Մնացականյան		
10.	Ռոբերտ	Նավասարդյան		
11.	Իլյա	Ստեփան		

Կ/Տ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԲԱԲԱՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 2 *20 հունվար 2012թ.*

ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011Թ. ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի և 69-րդ հոդվածի պահանջներով ինչպես նաև համայնքի ավագանու կանոնակարգով.

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Արարատ քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը:

Ավագանու անդամներ՝

1.	Արթուր	Ալեքսանյան		Հոգ
2.	Արազի	Գևորգյան		Կողմ
3.	Հենրիկ	Գևորգյան		Կողմ
4.	Յուրիկ	Գևորգյան		Կողմ
5.	Կարեն	Իսկանդարյան		Կողմ
6.	Վարդան	Կարապետյան		Կողմ
7.	Մուշեղ	Հակոբյան		Կողմ
8.	Տիգրան	Հարությունյան		Կողմ
9.	Խաչիկ	Մնացականյան		Կողմ
10.	Ռոբերտ	Պողոսսարդյան		Հոգ.
11.	Ի[illegible]	[illegible]		Կողմ

Կ/S ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԲԱԲԱՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐԱՐԱՏԻ՝ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 3 *20 հունվար 2012թ.*

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 09.12.2011Թ. ԹԻՎ 3/4 – ՐԴ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 26.12.2011թ. N1/14/1/6297-11 գրությունը.

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Համայնքի ավագանու 2011թ. դեկտեմբերի 9-ի <<Համայնքային սեփականություն հանդիսացող գույքի 2011թ. գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին>> N 13/4-րդ որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Որոշման 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝
Դուրս գրել գույքագրման արդյունքում հաշվառված, օգտագործման համար ոչ պիտանի հիմնական միջոցները և մանրարժեք գույքը համաձայն **1, 5, 6, 8, 9** հավելվածների:
2. Որոշման 2.1; 2.2 և 2.3 կետերը հանել:

Ավագանու անդամներ՝

1.	Արթուր	Ալեքսանյան		կողմ
2.	Արազի	Գևորգյան		կողմ
3.	Հենրիկ	Գևորգյան		կողմ
4.	Յուրիկ	Գևորգյան		կողմ
5.	Կարեն	Իսկանդարյան		կողմ
6.	Վարդան	Կարապետյան		կողմ
7.	Մուշեղ	Հակոբյան		կողմ
8.	Տիգրան	Հարությունյան		կողմ
9.	Խաչիկ	Մնացականյան		կողմ
10.	Գրիգոր	Սարգսյան		կողմ
11.	Իրինա	[illegible]		կողմ

Կ/S ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԲԱԲԱՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 4 *20 հունվար 2012թ.*

ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԻ Ա/Զ 12 ՇԵՆՔԻ ԲՆԱԿԱՐԱՆ 24 ԲՆԱԿԻՉ ԺԱՆՆԱ ՈՍԿԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ՝ ԻՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ԲՆԱԿԱՐԱՆԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20 և 32-րդ հոդվածի 12, 13 կետերով.

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Կատարել պետական գրանցում վերոհիշյալ հասցեի բնակարանի նկատմամբ, որպես Արարատի քաղաքային համայնքի սեփականություն՝ առանձին գույքային միավոր:
2. Ք. Արարատ Ա/Զ 12 շենքի բնակարան 24 հասցեն կրող բնակարանը նվիրել այդ բնակարանում 1990թ-ից բնակվող Ժաննա Գուրգենի Ոսկանյանի ընտանիքին՝ բաղկացած երկու անձից՝ ինքը և որդին՝ Էդվարդ Յուրիկի Ոսկանյանը, ծնված 1986թ-ին:

Ավագանու անդամներ՝

1.	Արթուր	Ալեքսանյան		կողմ
2.	Արազի	Գևորգյան		կողմ
3.	Հենրիկ	Գևորգյան		կողմ
4.	Յուրիկ	Գևորգյան		կողմ
5.	Կարեն	Իսկանդարյան		կողմ
6.	Վարդան	Կարապետյան		կողմ
7.	Մուշեղ	Հակոբյան		կողմ
8.	Տիգրան	Հարությունյան		կողմ
9.	Խաչիկ	Մնացականյան		կողմ
10.	Լեռներտ	Նազարյան		կողմ
11.	Էդգար	Ղազարյան		կողմ

Կ/Տ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԲԱԲԱՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 5 *20 հունվար 2012թ.*

ԻՆՏԵԳՐՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20 և 32-րդ հոդվածի 12, 13 կետերով ինչպես նաև համայնքի ավագանու կանոնակարգով.

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. 2012թ. փետրվարի 1-ից Արարատի քաղաքապետարանի վարչական շենքի առաջին հարկի 293 քմ տարածքը անհատույց օգտագործման անժամկետ հատկացնել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման նպատակով:
2. Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի հետ կնքել հատկացվող տարածքի անհատույց օգտագործման անժամկետ պայմանագիր:
3. Ս/թ. փետրվարի 1-ից ուժը կորցրած ճանաչել նախկինում Հայաստանի Հանրապետության սոցիալական հարցերի նախարարության հետ նշված տարածքի համար կնքված վարձակալության պայմանագրերը:

Ավագանու անդամներ՝

1.	Արթուր	Ալեքսանյան		Կողմ
2.	Արազի	Գևորգյան		Կողմ
3.	Հենրիկ	Գևորգյան		Կողմ
4.	Յուրիկ	Գևորգյան		Կողմ
5.	Կարեն	Իսկանդարյան		Կողմ
6.	Վարդան	Կարապետյան		
7.	Սուշեղ	Հակոբյան		Կողմ
8.	Տիգրան	Հարությունյան		Կողմ
9.	Խաչիկ	Մինասյան		Կողմ
10.	Ռոմանոս	Պետրոսյան		Կողմ
11.	Ռոմեն	Սարգսյան		Կողմ

Կ/Տ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԲԱԲԱՅԱՆ